



Հարգելի գործընկերներ,

Տեղեկացնում ենք որ «Յուքոմ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հրավիրում է բոլոր հետաքրքրված կազմակերպություններին ներկայացնել առաջարկներ՝ հետևյալ ծառայության մատուցման համար. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ում (այսուհետև՝ Ֆոնդային բորսա) կատարել Ընկերության թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի (այսուհետ՝ Պարտատոմսեր) պարտադիր գնանշումներ՝ Ֆոնդային բորսայի համապատասխան կանոններով սահմանված կարգով:

1. Ընդհանուր տեղեկություններ

Շուկա ստեղծողի կողմից կատարվող պարտադիր գնանշումները պետք է նպատակաուղղված լինեն շուկայում «Յուքոմ» ՓԲԸ 5 մլն ԱՄՆ դոլար՝ 7,5% տարեկան եկամտաբերությամբ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով (ԱՄՏ՝ AMUCOMB21ER6) և 250 մլն ՀՀ դրամ՝ 11% տարեկան եկամտաբերությամբ, 100,000 անվանական արժեքով անվանական արժեկտրոնային (ԱՄՏ՝ AMUCOMB22ER4) պարտատոմսերի իրացվելիության ապահովմանը, ինչպես նաև պարտատոմսերի կայուն և հիմնավորված գների ձևավորմանը՝ հաշվի առնելով շուկայում ձևավորված իրավիճակը:

2. Ծառայությունների նկարագիր՝

Ծառայությունների մատուցման հայտ ներկայացնող կազմակերպությունը (այսուհետ՝ «Հայտատու») ստանձնում է մատուցել ստորև ծառայությունները.

- Առևտրային նստաշրջանի բացման պահից առավելագույնը 10 րոպե հետո մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը տվյալ դասի արժեթղթերով ամբողջատ ապահովել երկկողմանի գնանշում,
- Երկկողմանի գնանշման ընթացքում գնման և/կամ վաճառքի հայտի բավարարման դեպքում երեք րոպեում ապահովել մոր երկկողմանի գնանշում,
- Երկկողմանի գնանշման ընթացքում ապահովել տվյալ դասի արժեթղթերի համար սահմանված նվազագույն գնանշման ծավալը՝ մասնակի բավարարման պայմանով (նվազագույն գնանշման ծավալը որոշվում է՝ ելնելով թողարկողի կապիտալիզացիայից, շուկա ստեղծողի կանոններով սահմանված կարգով),
- Առևտրային նստաշրջանի ընթացքում արժեթղթերով երկկողմանի գնանշումը կատարել Հայաստանի Ֆոնդային բորսայի կանոններով սահմանված սպրեդի սահմաններում,
- Նույն առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ դասի արժեթղթերով երկկողմանի գնանշման փաստացի կատարված յուրաքանչյուր երեք փոփոխության հաշվարկով տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքել առնվազն մեկ գործարք:

3. Որակավորում

Հայտատուն պետք է բավարարի հետևյալ նվազագույն պայմաններից՝

- Վերջին մեկ տարում պետք է ունենա որևէ դասի արժեթղթի Շուկա ստեղծողի կարգավիճակ:

- Պետք է լինի Բորսայի անդամ, որի՝ որևէ դասի արժեթղթի Շուկա ստեղծողի կարգավիճակը հարկադիր կերպով չի դադարեցվել վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում:

4. Առաջարկի ներկայացումը

Հայտատուներն իրենց առաջարկը պետք է ներկայացնեն ոչ ուշ, քան 2021թ. փետրվարի 19-ը, մինչև աշխատանքային օրվա ավարտը՝ փակ ծրարով այն հանձնելով ստորև նշված անձանցից որևէ մեկին:

Առաջարկը պետք է ներառի՝

- ա) Հայտատուի տվյալները (անվանում, հասցե, հվհի, պատասխանատու անձ, կոնտակտային տվյալներ).
- բ) Հայտատուի որակավորմանը ներկայացվող՝ վերոշարադրյալ պահանջների համապատասխանելիության վերաբերյալ մանրամասն տվյալներ և հիմնավորող փաստաթղթեր.
- գ) Ծառայությունների մատուցման գնային առաջարկը (ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսանալու դեպքում՝ դրա վերաբերյալ նշումով).
- դ) Ծառայությունների դիմաց վճարման ակնկալվող պայմանները.
- ե) Ծառայությունների մատուցման առնչվող այլ տեղեկություններ և/կամ մեկնաբանություններ.
- զ) Առաջարկի վավերականության ժամկետը (առնվազն 30 օր).

5. Կոնտակտային տվյալներ

5. Առաջարկների, հարցերի, տեխնիկական քննարկումների համար կարող եք կապ հաստատել ստորև նշված տվյալներով.

Գնումների մասնագետ՝ Սոնա Թամրազյան sona.tamrazyan@ucom.am +374 95 988 146
ԳՄԲ ղեկավար՝ Հովակ Պողոսյան՝ hovak.podosyan@ucom.am +374 44 444 340

Անհրաժեշտության դեպքում Ընկերությունը պատրաստ է կազմակերպել աշխատանքային քննարկումներ՝ Ծառայությունների մատուցմանն ու առաջարկների ներկայացմանն առչնվող հարցերի պարզաբանման նպատակով: